



Ք.Երևան
12 սեպտեմբերի 2019թ.

ԲԴԽ-63-Ո-Կ-15

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՇՈՏ ԽԱԶԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով Արդարադատության նախարարի՝ «ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Խաչիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 35-Ա միջնորդությանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Փաստաբան Սեդա Սողոմոնյանի կողմից Արդարադատության նախարարություն են ներկայացվել հաղորդումներ՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Խաչիկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը՝ Արդարադատության նախարարը 17.07.2019թ. թիվ 26-Ա որոշմամբ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Խաչիկյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի 06.09.2019թ. N 35-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդին՝ Կոտայքի

մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Խաչիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 04.06.2018թ. թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 103-րդ կետի համաձայն՝ «Դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը և վարույթի նյութերը ներկայացվում է Խորհրդի նախագահին, ով Օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետում քննարկման համար նշանակում է Խորհրդի նիստ: Միջնորդությունը և վարույթի նյութերը Խորհրդի անդամներին է ներկայացվում նիստից առնվազն 10 օր առաջ»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 04.06.2018թ. թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 103-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արդարադատության նախարարի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Խաչիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ հրավիրված Բարձրագույն դատական խորհրդի նիստը հրավիրել 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ժամը 12.00-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կորյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

